



**ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,
ՊԱՏԱՄԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ԵՎ
ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

22 դեկտեմբերի 2022թ.

ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Երեմ Եսոյանս, ուսումնասիրելով <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ ոստիկանության կողմից ավտոմեքենաների վթարային տարհանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.11.2022թ-ին հայտարարված թիվ <<ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՃՈ 2023/ՎԹ/ՏՀՄ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2022թ-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերությանը շտկում առաջարկելու, ապա հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու և <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2022թ. դեկտեմբերի 15-ին <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ ոստիկանության կողմից ավտոմեքենաների վթարային տարհանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.11.2022թ-ին հայտարարված թիվ <<ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՃՈ 2023/ՎԹ/ՏՀՄ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2022թ-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերությանը շտկում առաջարկելու, ապա հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու և <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է նաև միջնորդություն՝ գործը դատական նիստում քննության առնելու մասին:

2022թ. դեկտեմբերի 20-ին հայցադիմումը կից փաստաթղթերով, հանձնվել է դատավոր Ե. Եսոյանի աշխատակազմին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների

պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն գտնում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Անդրադառնալով գործը դատական նիստում քննության առնելու մասին հայցվորի ներկայացուցչի միջնորդությանը, ապա դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Տվյալ դեպքում, ելնելով ներկայացված վեճի և հայցապահանջների բովանդակությունից, առկա է կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտություն, որպիսի պարագայում առկա է առնվազն մեկ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ըստ հայցի <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ ոստիկանության կողմից ավտոմեքենաների վթարային տարհանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.11.2022թ-ին հայտարարված թիվ <<ՀՀ Ո ԳՀՕՁԲ-ՃՈ 2023/ՎԹ/ՏՀՄ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2022թ-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերությանը շտկում առաջարկելու, ապա հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու և <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող ՀՀ ոստիկանությունից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել դատական նիստով, որը տեղի կունենա 2023թ. հունվարի 12-ին, ժամը՝ 14:40-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունու նստավայրի (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Խորենացի 162Ա) դատական նիստերի թիվ 7 դահլիճում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՂԱՏԱՎՈՐ՝

ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ